

ՀՏԴ 35/351/37

**ՊԵՏԱԿԱՆ ԱՇԽՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆՈՆ ԱՐԴԻԱԿԱՆ ԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ**

ՄԽԻԹԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ, ԱՇՈՏ ԶԱԼԻՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Հոդվածում ներկայացվում է պետականաշինության կարևորությունը յուրաքանչյուր պետության զարգացման և արդիականացման համատեքստում, պետականաշինության իրականացման ընթացքում դրական ու բացասական ազդող գործոնները:

Բանալի բառեր. պետություն, պետականաշինություն, պետական կառույցներ, ընտրանու խմբեր, ազգաշինություն, քաղաքական համայնքներ, արտածին և ներծին պետականաշինություն:

Բազում այլ գործոնների շարքում պետականաշինության կարևորությամբ է պայմանավորված նաև պետության ղեկավարող կառույցների արդյունավետ աշխատանքը և ժողովրդի կենսունակության բարձրացումը: Ակնհայտ է, որ պետության արդիականացման ճանապարհին հանդիպում են բազմաթիվ մարտահրավերներ, որոնց ոչ միայն պետք է տալ համարժեք պատասխան, այլև այդ մարտահրավերներին դիմակայելով հավաքել անհրաժեշտ փորձ ու հմտություններ պետության զարգացման գործում խորքային ծրագրեր իրականացնելու համար:

«**Պետություն**» հասկացությունը ենթադրում է սահմանված տարածքում հասարակությունների կազմակերպման գերիշխող ձևաչափ, որտեղ առկա են համակեցության օրենքներ և դրանց կիրարկումը հսկող կառույցներ: Դրանց հիման վրա էլ պետությունը կարգավորում է **ներպետական** գործընթացները: Գործընթացը, որով տարածքները և ժողովուրդները դառնում են սեփական կանոններով ու կառավարման ապարատով առանձին կառավարվող միավոր՝ հաճախ անվանում են **պետության ձևավորում**: Պետության կազմավորմանը հաջորդում է **պետական կառույցների** ձևավորումը:

Պետական կառույցները պետության և պետականության գաղափարների տեսանելի մարմնացումն են: Դրանց շարքին են դասվում հատկապես պետական իշխանությամբ և քաղաքական որոշումներ կայացնելու լիազորություններով օժտված գործադիր իշխանության մարմինները և քաղաքական ընտրանին՝ անհատները: Իշխող վերնախավն ստանում է

պետության քաղաքականության ընթացքը, ձևերն ու ուղղությունները որոշելու օրինական լիազորություններ [1]:

Պետականաշինությունը կարող ենք դիտարկել նաև որպես հիմնականում տեղական և ազգային հենքի վրա ձևավորվող **ազգային** գործընթաց, պետություն-հասարակություն հարաբերությունների արդյունք, որի վրա կարող են ազդել բազում և բազմազան արտաքին ուժեր:

Պետության կառուցվածքը որոշվում է հիմքում ընկած քաղաքականությամբ, այսինքն՝ ինչպիսի քաղաքական ուղղվածություն կամ գաղափարախոսություն կունենա տվյալ երկիրը, այդպիսին կլինի նրա պետական կառուցվածքը [2]: Օրինակ՝ Իրանի Իսլամական Հանրապետությունն աստվածապետական երկիր է և հետևաբար նրա պետական համակարգը հարմարեցված է իսլամին: Մահմեդական երկրների մեծ մասում (Պակիստան, Հյուսիսային Աֆրիկայի երկրներ, Իրան, Բրունեյ և այլն), այնպես էլ Իրանում շարիաթ¹ նորմերը ներառված են աշխարհիկ օրենսդրության մեջ [3], [4]:

Պետական քաղաքական համակարգը կարող է գոյատևել դարեր շարունակ և այդ ընթացքում որոշումներ կայացնող իշխանությունը, ըստ էության, «բաշխվում և վերաբաշխվում» է **քաղաքական ընտրանու խմբերի** միջև: «Էլիտա» (կառավարող ընտրանի, վերնախավ) բառի ծագումը սկիզբ է առնում ֆրանսիական «elite» բառից, ինչը նշանակում է «լավագույն, ընտրովի, ընտրյալ»: Պետության կայացման և արդիականացման իրավիճակում աճում է ընտրանու դերը հասարակության սոցիալ-տնտեսական կառուցվածքում:

Քաղաքական ընտրանին բարձրագույն՝ պետության կարևորագույն որոշումներ ընդունող սուբյեկտ է: Նա ունի հասարակության կառավարման համար անհրաժեշտ ներուժ, իրականացնում է կառավարման պետաիշխանական գործառույթներ և իր կայացրած քաղաքական որոշումներով ներազդում է հասարակության և հանրային կյանքի վրա: Իշխանական ներուժը և արժեքային համակարգը կառավարող վերնախավի դրսևորման հիմնական չափանիշներն են, որոնք կախված են պատմական, ինստիտուցիոնալ և մշակութային կոնկրետ առանձնահատկություններից:

Պետականաշինությանը զուգահեռ պետք է դիտարկել նաև **ազգաշինության** գաղափարը: Եթե պետությունը միտումնավոր կամ չմտածված

¹ Շարիաթ, շարիաթական կամ իսլամական օրենք (արաբ․՝ շարիա - ճշմարիտ ուղի, գործելակերպ, օրենսդրություն), իսլամի կրոնական և իրավական օրենքների ժողովածու: Մշակվել է Արաբական խալիֆայությունում՝ VII-XII դարերում և կազմում է իսլամական ավանդույթի մասը: Մուսուլմանների կրոնական հիմնական պարտավորությունների մասին պատվիրաններից բացի, ընդգրկում է պետականության, քրեական, քաղաքացիական և այլ դատավարական և իրավունքի այլ նորմեր:

ազգային կերտման օրակարգից բացառի իր ժողովրդին (օրինակ՝ էթնիկ այլ խմբերին), ապա պետականաշինության գործընթացը մարտահրավերների շարունակական ռիսկ է պարունակելու և մշտապես կանգնած է լինելու խափանման վտանգի առջև: Բարձրացնելով ազգային, էթնիկ ու պատմական արժեքների հարցերն ու մշտապես շրջանառության մեջ դնելով պատմականության ու հնագույն արժեքների կրող լինելու գաղափարը՝ ստեղծվում է պետականաշինության գաղափարի իրագործման մոտիվացիա: Այստեղ կարող ենք բերել հենց Հայաստանի Հանրապետության օրինակը: Պատմական անցյալն ու ունեցած դժվարին ու նաև՝ հզոր ժամանակաշրջանները (ինչպես օրինակ՝ Արտաշիսյանների ժամանակներն էին), պատկերավոր ասած, կարող են առաջացնել նախանձ սեփական անցյալի հանդեպ և դառնալ մոտիվացիա այդ պատմական ժամանակաշրջանը նորից վերակազմակերպելու համար: Ասածն ամենևին չի ենթադրում միայն տարածքային մեծությունը, այլ նաև տնտեսական ու ռազմական, քաղաքական ու մշակութային վերելքները, որի մասին մեզ հասել է պատմագիտական ուսումնասիրությունների շնորհիվ: Այդ հզորության ու միասնականության գաղափարը շրջանառելով հնարավոր է ստեղծել գործելու խթան և արմատավորել, որ պետք է հավատարիմ մնալ պատմական անցյալին:

Պետականաշինության գործում կարևոր է նաև **քաղաքական համայնք** տերմինը, որը ենթադրում է պետականաշինության գործընթացի և տվյալ տարածաշրջանում առկա քաղաքական գործընթացների կամ կարգի համադրում: Գլոբալացման (համաշխարայնացման) դարաշրջանում միջազգային քաղաքական գործընթացների ազդեցությունը տվյալ պետության նկատմամբ ազդում են առավել մեղմ՝ եթե ուժեղ է քաղաքական համայնքը: Հարցի քննարկման համատեքստում «գլոբալացումը» դիտարկում ենք որպես գործընթացների համախումբ, որի ընթացքում ազգային պետությունները (նրանց ինքնիշխանությունը) հանդիսանալով աշխարհի միասնական ու փոխկապակցված տնտեսական, քաղաքական և մշակութային տարածքի բաղկացուցիչներ՝ միաձուլվում են վերազգային ցանցի մեջ, ենթարկվում դրանց իշխանության կողմնորոշումներին, նույնականությանը և գործընթացներին [6], [7], [8]: Միջազգային գործընթացների ազդեցությունը պետականաշինության գործընթացի վրա կարող է ունենալ և՛ դրական,¹ և՛ բացասական ազդեցություն² [5]:

¹ Ինչպես, օրինակ, միջազգային լրատվամիջոցների դերը մարդու իրավունքների պաշտպանությունը խթանելու գործում:

² Ինչպես, օրինակ, միջազգային հանցավոր խմբավորումների հետ քաղաքական առաջնորդների համագործակցությունը:

Պետականաշինության գործընթացը հանդիսանալով ցանկացած երկրի արդիականացման բնականոն ընթացք՝ հիմքում ունի երեք կարևոր գործոն, որոնցից յուրաքանչյուրի կայուն կազմակերպումը դրական կանդրադառնա պետականաշինության համար: Դրանցից են քաղաքական կարգավորումները, «գոյատևման գործընթացները» և «հուսալի գործառույթները»:

Քաղաքական կարգավորման հասնելու լավագույն ճանապարհն ընտրանու ներկայացուցիչների միջև փոխհարաբերությունների հստակեցումն ու ներքին պայմանավորվածություններն են, որը նաև կանխում է բախումների առաջացումը: Ընտրանին բնութագրվում է որպես մոտեցումների, կարծրատիպերի և վարքագծի նորմերի շաղկապվածությամբ և արժեքների ընդհանուր միասնությամբ միավորված հասարակության կազմակերպված և համախմբված փոքրամասնություն: Ընտրանու ներքին միասնականության մակարդակը կախված է իր սոցիալական և էթնիկ միատարրության աստիճանից, ընտրանու հավաքագրման ձևաչափերի տեսակներից, քաղաքական դեկավարման գերակշռող ոճից:

Պետականաշինության կայուն ընթացքի վրա իշխանության փոխանցումը չպետք է դառնա խանգարող հանգամանք: Սա շատ պատասխանատու պահ է, որը՝ որևէ գործընթաց չխափանելու համար պետք է կազմակերպվի հմտորեն ու անցնցում: Այստեղ է, որ կարևորվում է քաղաքական կարգավորման պահը: Այն ենթադրում է իշխող և ընտրություններում հաղթած ուժերի միջև ներդաշնակ և խաղաղ համագործակցություն, երբ նախորդ վարչակարգը հաջորդին կփոխանցի իր ծրագրերը և «նորերը» դրանց ավելացնելով՝ հնարավոր կլինի շարունակել պետականաշինության բնականոն ընթացքը: Բարձր սոցիալական կարգավիճակի շնորհիվ ընտրանու անդամները որոշում են հասարակական զարգացման բնույթը, ունենում են կայունացնող կամ ապակայունացնող ազդեցություն սոցիալական գործընթացների վրա, ապահովում են հավասարակշռությունը տարբեր սոցիալական կառույցների և դրանց շահերի միջև:

Նոր՝ արդիականացված սոցիալական իրողության կերտման ժամանակներում նոր ընտրանիները՝ քաղաքական դաշտի իրողություններին համապատասխան, ձեռք են բերում նոր առանձնահատկություններ և բնութագիր:

Պետականաշինության առաջընթացի հաջորդ կարևոր գործոնը՝ պետության ինստիտուցիոնալ շրջանակի գոյատևման և ամրապնդման համար անհրաժեշտ **գոյատևման գործընթացների** ամբողջությունն է: Ձևավորված կառույցները պետք է կարողանան կատարել պետականաշինության գոյատևման գործառույթներ, մասնավորապես՝

• **անվտանգությունը:** Կարողանալ վերահսկել երկրի համար վտանգ ներկայացնող բոլոր գործոնները, ձևավորել անվտանգ կենսագործունեության բոլոր բաղկացուցիչները՝ նաև հաշվի առնելով արտաքին քաղաքական գործընթացները և այլն,

• **եկամուտները:** Երկրի ներսում ֆինանսական համակարգի կայուն զարգացման կառուցակարգերի ներդրում (հիմնականում կազմակերպվում է կայուն-համաչափ հարկման և միջազգային ֆինանսական կազմակերպություններից վերցված փոխառությունների միջոցով, ինչպես նաև այլ տուգանքների ու օրենսդրությամբ սահմանված թույլատրելի գանձումների տեսքով),

• **օրենսդրական դաշտը:** Երկրի Սահմանադրության և միանշանակորեն մեկնաբանվող օրենքների ընդունում՝ երկրի ներսում կարգ ու կանոն և ներքին անվտանգության երաշխիքներ ստեղծելու համար:

Առաջընթացի երրորդ գործոնը **հուսալի կամ ակնկալելի գործառույթների իրականացումն ու** ձեռքբերումն է: Ակնկալիքներ, թե ինչպե՞ս պետք է պետությունը հանդես գա սեփական քաղաքացիների և արտաքին դերակատարների համար կարևոր հարցերում: Ոչ բոլոր պետությունների դեպքում է, որ կառավարությունից հասարակության սպասելիքները կամ պահանջները հաճախ են բարձրաձայնվում կամ բավարարվում [9]:

Հայտնի սոցիոլոգ Ֆ. Ֆուկույաման իր «Պետականաշինություն. կառավարումը և աշխարհակարգը XXI դարում» գրքում պետականաշինության գործընթացը ներկայացնում է երեք փուլով և որպես օրինակ բերում հիմնականում հակամարտությունները նոր հաղթահարած երկրներին: Ըստ նրա՝ այդ երեք փուլերն են՝

1. **հետկոնֆլիկտային վերակազմավորումը**, երբ երկրները նոր են դուրս գալիս հակամարտության ծանր ու երկարատև վիճակից, պետության կառուցվածքն ամբողջությամբ կազմաքանդված է և պահանջվում է դրա ամբողջական բարեփոխում: Այս ժամանակահատվածում անվտանգության ուժերի, մարդասիրական և տեխնիկական օժանդակության ներդրման միջոցով կայունության ապահովումը դառնում է առաջնահերթ: Որոշակի կայունության հասնելուց հետո սկսվում են ինստիտուտների ձևավորման և պետականաշինության համար անհրաժեշտ միջոցների իրագործումը,

2. **սեփական պետական ինստիտուտների ստեղծումը**, որը հիմնվելով առկա կայունության վրա, իշխանությունն սկսում է անմիջապես կազմակերպել՝ ձևավորելով գործընթացը պարզ ու հարմարավետ կազմակերպելու համար անհրաժեշտ բոլոր օղակները,

3. պետական ինստիտուտների ուժեղացումն է. ինչը խիստ բարդ է: Այս փուլում դժվարությունների բազմաքանակությունը կարող է խոչընդոտել պետականաշինության գործընթացի ճիշտ կազմակերպմանը [10]:

Գույություն ունեն պետականաշինության էության տարբեր տեսական սահմանումներ և մոտեցումներ: Օրինակ՝ բավականին տարածված են «արտածին» և «ներծին» պետականաշինությունները: Պետականաշինության «արտածին» մոտեցումը դիտարկվում է որպես իմպերիալիզմի և գաղութատիրության ենթատեքստ, որի արդյունքում տեղական գաղափարները և ազգային արժեքները բախվելով այլ օտար արժեքների՝ կորցնում են իրենց արդիականությունն ու ժամանակի ընթացքում սերունդների մոտ վերանում են ազգային ու պետական գաղափարները՝ վերածվելով սովորական ու անիմաստ տերմինների: «Ներծին» մոտեցումն ունի առավել ազգային երանգ և ենթադրում է տվյալ պետության կազմակերպման և վերակենդանացման ողջ գործընթացների իրականացում ազգային գաղափարների վրա: Պետականաշինությունը դառնում է ազգային գործընթաց՝ արտացոլելով տվյալ ժողովրդի պատմական և մշակութային կարևոր արժեհամակարգը:

Պետականաշինությունը բնականոն և հաջողված իրականացնելու համար անհրաժեշտ է պետական կարևոր պաշտոններն զբաղեցնելու համար քաղաքական հավաքագրում՝ կադրերի ընտրություն: Այստեղ կարևոր է ինչպես ինստիտուտների կայացվածության աստիճանն ու նրանց գործունեության հիմքում ընկած իրավական ու արժեքային կողմնորոշիչները, այնպես էլ՝ հասարակության համերաշխության ձևն ու տեսակը [11]:

Վերը բերված մտքին, որպես օրինակ, կարող ենք բերել ներկայիս բազմավեկտոր աշխարհում տիրող քաղաքական անկայուն իրավիճակը: Իշխող քաղաքական թիմի անդամներից շատերն արտահայտելով ժողովրդի մեջ արմատացած ազգային ու պետական գաղափարներին հակասող մտքեր՝ հանգեցնում են բնական անհամաձայնության ու վրդովմունքի: Այդ վրդովմունքն իր հերթին վերաճում է ընդվզման և անվստահության տվյալ իշխող ուժի և նրա քաղաքական թիմի (կադրերի) նկատմամբ: Ինչն էլ՝ իր հերթին, բերում է անհնազանդություն տվյալ իշխանության հանդեպ:

Պետականությունը մեկ անգամ կազմակերպվող կամ՝ մեկ անգամ սկսված ու ավարտված գործընթաց չէ. այն ունի պատմական զարգացման հստակ ու երկար փուլեր, ենթարկվում է մշտական վերափոխումների, ուստի այս դեպքում ևս պետականաշինության բնականոն ընթացքը կարող է խաթարվել սխալ ընտրված քաղաքական թիմի կամ կադրերի

պատճառով: Հիասթափված ժողովուրդը դադարում է ենթարկվել և վստահել, իսկ դա անկայունացնում է կառավարման ինստիտուցիոնալ համակարգը:

Պետականաշինության զարգացման գործում խիստ կարևոր է իշխանության օրինականությունը (օրինականությունը): Ոչ օրինական իշխանության շուրջը ժողովրդին համախմբելը գրեթե անհնար է և դա ստեղծում է քաոսային ու անկայուն իրավիճակ՝ ինչից էլ օգտվում են արտաքին ուժերը: Ազգային պետական կառավարման նշանակության փոփոխության պայմաններում վերազգային՝ գլոբալացված իշխանական լիազորությունների վերաբաշխման արդյունքում ժամանակակից պետության ինստիտուցիոնալ համակարգային կառույցները հանդիպում են երկու հիմնական մարտահրավերների:

1. ազգային պետություններում աճում է խզումը պաշտոնական և իրական իշխանության լիազորությունների միջև,

2. սրվում են տարբեր երկրների պետական կառավարման կառույցների ու հասարակական ինստիտուտների, պետակառավարչական մարմինների և շուկայական ինստիտուտների միջև սահմանակարգային փոխհարաբերությունները:

Որպես միջազգայնացված կառավարման ձև՝ օրինական իշխանություններին մեծ վստահության և հարգանքի են արժանացնում նաև միջազգային դերակատարները, ինչը նպաստում է ներդրումների և ֆինանսական լայն միջոցների ստացմանը:

Պետականաշինության և վերակառուցման արտաքին միջամտությունները բնութագրվում են սկզբնական շրջանում նորաստեղծ կամ՝ նոր անկախացած երկրներում թույլ զարգացած և դեռևս անկայուն պետական ապարատին ժամանակավորապես օգնություն տրամադրելու միջոցով: Սա արտաքին դերակատարների կողմից ուղիղ միջամտությունն է: Օրինակ՝ ազատական շրջանակների գաղափարներում գերակշռող միջազգային պետականաշինության նախագծի տարածումը Լիբերիայի Հանրապետությունում¹ բախվում էր իմացական, հայեցակարգային և գործնական շրջանակների մի շարք մարտահրավերների, որոնք հանգեցնում են ակնհայտ ձախողումների և սահմանափակ հաջողությունների: Այս պայմանավորված էր ազգային արժեքների տարբերության և տվյալ երկրներում ազգայնական գաղափարների խորն արմատների առկայությամբ:

¹ Լիբերիան Արևմտյան Աֆրիկայի ամենաաղքատ երկիրն է և այս ցուցանիշով՝ աշխարհի երրորդ երկիրը: Լիբերիայում գործազրկության մակարդակը կազմում է բնակչության 85% -ը: Տե՛ս՝ [12]:

Գլոբալացման պետականաշինության գաղափարները հակադրվում են պետական գաղափարներին և ստիպում տվյալ ժողովրդին ընդվզել այդ գաղափարների դեմ, պահանջել սեփական պետականաշինական ձևաչափի ներդրում: Այս գործընթացներն առաջացնում են բնական հարցեր.

1. ո՞րն է իսկապես ամենակարճ և ամենահաջողված պետականաշինական ձևաչափը՝ պետություն-հասարակություն կապով ձևավորված անվտանգ և ազգային արժեքներով շրջանակված ձևաչափը, թե՛ արտաքին միջամտությամբ ստեղծված համակարգը, որը պետության կայացման հարմար պայմաններ ստեղծելուց և պետականաշինական ծրագրերի իրականացման կյանքի կոչելուց հետո պետք է հեռանա,

2. արդյո՞ք արտաքին միջամտությունից նման մեծ ծավալներից հետո պետականաշինությունն ամբողջությամբ կհամարվի ազգային շահերով առաջնորդված և ինքնուրույն ձևավորված համակարգ և արդյո՞ք տվյալ ժողովուրդը կընդունի այդ ձևաչափը, որքան էլ այն խոստումնալից թվա:

Պետականաշինության վրա ազդող գործոններ կարող են դառնալ նաև՝

- **կայուն տնտեսական աճը:** Ներդրումների և առևտրի աճը նպաստում են ֆինանսաշրջանառության և սոցիալական վիճակի բարելավմանը: Ներդրումների և առևտրի ընդլայնումը կկարողանա առաջացնել կառավարության գործունեության հանդեպ վստահության ամրապնդում,

- **եկամուտների բազան:** Հարկերի բարձրացումը և համաչափ հարկման սկզբունքը կարևոր է պետականաշինության համար,

- **արտաքին սպառնալիքները:** Հակամարտության արդյունքում տուժած երկրները կամ այն երկրները, որոնք կանգնած են մեկուսացման խնդրի առաջ, կարող են պետականաշինության ծրագրերի միջոցով հզոր պետություն ստեղծելու և առաջացած շրջափակումից դուրս գալու մոտիվ ունենալ,

- **ռիսկերը:** Պետականաշինությունը կազմակերպելու համար ռիսկի գործոնը մեծ դեր ունի,

- **իրավունքները և քաղաքական ներփակումը:** Իրավունքների ոտնահարումն ու խտրականության աճն առաջացնում են անկայունության ավելի մեծ հավանականություն,

- **օժանդակող և չօժանդակող գործընկերները:** Արտաքին դերակատարները չեն կարող ունենալ ուղիղ մասնակցություն պետականաշինությանն այլ երկրներում, բայց կարող են թողնել ազդեցություն. դոնորների դերը պետականաշինության հարցում կարող է և՛ օգտաշատ լինել, և՛ հանգեցնել խոչընդոտների,

- **ժառանգությունը:** Պետականաշինության հարցում կարևոր է նախորդ շրջանից ժառանգած ավանդույթների պահպանումն ու դրանց արդիականացումը,

• **դեկավարությունը:** Այն վճռորոշ ազդեցություն է ունենում պետականաշինության աճի ուղղության և զարգացման վրա: Կառավարության աշխատանքից է կախված պետականաշինական ծրագրերի արդյունավետ կատարումը և պետականաշինական ծրագրերի տապալման բացառումը,

• **մշակութային գաղափարները:** Աշխարհի տարբեր կետերում պետության մասին գաղափարն ու պատկերացումները տարբեր են: Առանձին պետություններ կարող են բախվել մշակութային ազդեցությունների խնդրին և կարող են հայտնվել մշակութային նոր գաղափարներ, որոնք որոշակիորեն կթուլացնեն ազգային գաղափարների իրականացմանը՝ վնասելով պետականաշինական գաղափարների իրականացմանը,

• **Ժամանակը:** Պատմական զարգացման ողջ ընթացքում, յուրաքանչյուր պետության համար կարևոր է ժամանակի գործոնը: Մշտական փոփոխվող աշխարհաքաղաքական զարգացումներում կարևոր է գիտակցել, որ միջազգային դոնորների ներգրավումը պետականաշինության մեջ առաջին հերթին պիտի չափվի ազգային շահերի սանդղակով, ուստի պետականաշինության գործում միջազգային դոնորների ներգրավման հարցում կարևոր են երկու սկզբունքի առկայություն.

1. առաջնահերթությունը և հաջորդականությունը: Պետականաշինությունը ենթադրում է սեփական երկրի շահերից բխող հարցերին առաջնահերթություն տալը և իրենց ուղարկված բոլոր արտաքին ազդակների մանրակրկիտ վերլուծումը: Միջազգային դերակատարները կարող են ուղարկել ազդակներ՝ հայտնելով իրենց պատրաստակամությունը տվյալ երկրում ընթացող իրադարձություններին մասնակցելու համար՝ չխոչընդոտել պետականաշինական ծրագրերի իրականացմանը: Այս դեպքում պետք է հստակ հաշվարկվեն բոլոր հնարավոր ռիսկերն ու խնդիրները, որոնք կարող են առաջանալ օտար միջամտությունից և հասկանալ այն բոլոր հետևանքները, որոնք կառաջանան պետականաշինական հարցերում՝ օտար միջամտությանն առաջնահերթությունը տալով,

2. աջակցություն քաղաքական կարգավորումներին: Արտաքին դերակատարները փորձում են նպաստել տվյալ երկրում քաղաքական անհամաձայնությունների կարգավորմանը և բարձրացնել նաև ժողովրդի վստահությունն իրենց հանդեպ, նվազեցնել ժողովրդի՝ պետականաշինության կամ ազգային գաղափարների իրականացմանն արտաքին միջամտության հանդեպ բացասական վերաբերմունքը: Ինչպես գտնում են առանձին մասնագետներ, միջազգային դերակատարները հաճախ իրենց միջամտությունը պետականաշինության կայացման գործում արտահայտում են անվտանգության ոլորտում տրվելիք օգնություններով, ինչն իրականում արվում է ազդեցության ավելացման համար [13]:

Քաղաքակրթության զարգացման ժամանակակից պայմանները բնութագրվում են երկու հակասական միտումներով. մի կողմից՝ համաշխարհայնացման, ազգային և մշակութային սահմանների ինտեգրման և

համահարթեցման գործընթացների խորացմամբ և մյուս կողմից՝ հակազ-
լրբալիստական՝ ազգային ինքնիշխանությունը պաշտպանող, ազգային
ինքնության, արժեքների և ավանդույթների պահպանման շարժումների
ուժեղացման աճով:

Հատկապես ազգային պետությունների համար¹ պետականաշինութ-
յան գործընթացի արդյունավետությունը որոշող կարևորագույն խնդիրնե-
րից է նոր՝ ազգային մտածողությամբ կառավարման մշակութային «դաս-
տիարակություն» ստացած և հմտություններով զինված նոր ինտելեկտո-
ալ կառավարողի՝ հանրային ծառայողների ձևավորումը: Այսօր մենք
պարտավոր ենք շեշտը դնել քաղաքակրթության զարգացման ընթաց-
քում «**կուրակած տեսական և գործնական գիտելիքների և փորձի փո-
խանցման**», պատմական ժամանակներից մինչ օրս հասարակություննե-
րի **կառավարման արվեստի** ժառանգածի **ռացիոնալ ձեռքբերումների**
օգտագործման անհրաժեշտության վրա: Քաղաքակրթության պատմա-
կան զարգացման տարբեր ժամանակահատվածներում հայ պատմական
կառավարչական միտքն ունեցել է իր առանձնահատուկ տեղն ու դերը պե-
տականաշինության զարգացման գործում: Մանսավորապես, Եզնիկ Կող-
բացու և Գրիգոր Տաթևացու դատողություններում տեղ են գտել **բոլոր մա-
կարդականների կառավարողի՝ իշխանավորի** վարքի, **դիրքի և կեցվածքի,
վարվելակերպի նորմերը**, որակական հատկությունների ու հմտություն-
ների, հասարակական կյանքում ենթակաների և հասարակության հետ
փոխհարաբերությունների վերաբերյալ վերլուծությունները: Նրանք **կա-
ռավարման ներդաշնակությունն ապահովելու համար** կարևորել են
«**կառավարողների և կառավարվողների որոշակի անձնային որակները՝
իմաստուն վարքի դրսևորումը**» [14]:

Ժամանակակից աշխարհի մարտահրավերներն ու խնդիրները փոխ-
վել են և փոխվել են դրանց դիմագրավելու միջոցներն ու կառուցակարգե-
րը, ուստի բարձրացել է պետականաշինության անխափան իրա-
կանացման անհրաժեշտությունը, որպես կայուն զարգացման և պետութ-
յան արդիականացման գլխավոր հիմքերից մեկը:

¹ Ինչի կարևորումը կարծես պարտադիր չէ ազգային հենք չունեցող կամ՝ բազմազգ
պետությունների համար, ինչպիսիք են Ռուսաստանի Դաշնություն, Չինաստան,
Հնդկաստան, Բրազիլիա, ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա և այլն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Каспэ С. И.**, Политическая теология и nation-building: общие положения: российский случай, 2012.
2. **Whaites A.**, States in Development: Understanding State-building, Governance and Social Development Group Policy and Research Division, 2008.
3. **Ա. Հայրապետյան**, Օտար բառերի բացատրական բառարան, հեղինակային հրատարակություն, Երևան, 2011.
4. **Л.Р.Сюкияйнен**, Исламское право: взаимодействие юридического и религиозного начала.(Ежегодник либертарно-юридической теории. Выпуск 1. М., 2002.)
5. **Allen D.**, “New Directions in the Study of Nation-building: Views through the Lens of Path Dependence”, International Studies Review.
6. **V. Kapitsyn**, Nationalism in the Space of Globalization and Identification «the West - the East» // European Society or European Societies: a View from Russia. Moscow – Lisbon, 2009;
7. **A.V. Manoilo**, World Models and Technologies of Psychological Impact to Resolve International Conflicts // NB: Международные отношения. 2013. № 4;
8. **В.А. Мельянцева**, Долгосрочные тенденции, контртенденции и факторы экономического роста развитых и развивающихся стран / Ин-т стран Азии и Африки МГУ имени М.В. Ломоносова. М.: Ключ, 2015;
9. **П. Бурдьё**, Социология политики / Пер. с фр.; сост., общ. ред. и предисл. Н. А. Шматко. — М.: Socio-Logos, 1993.
10. **F. Fukuyama**, The imperative of state-building, Cornell University Press 2004.
11. **D. Chandler**, International Statebuilding: The Rise of Post-Liberal Governance, London and New York: 2010.
12. COUNTRY COMPARISON: UNEMPLOYMENT RATE. Всемирная книга фактов ЦРУ. 2020
13. **J. Herbst**, Responding to State Failure in Africa // International Security. 1996. №21 (3).
14. **Վ. Միրզոյան**, Գրիգոր Տաթևացին իմաստուն կառավարման մասին: // ՀՊՏՀ ամսագիր, 2007թ., # 3

КУЛЬТУРА ГОСУДАРСТВЕННОГО СТРОИТЕЛЬСТВА КАК ГАРАНТИЯ НОРМАЛЬНОЙ МОДЕРНИЗАЦИИ ГОСУДАРСТВА

МХИТАР ГАСПАРЯН, АШОТ ЗАЛИНЯН

Академия государственного управления Республики Армения

В работе представлена важность государственного строительства в контексте развития и модернизации каждого государства, положительные и отрицательные факторы, влияющие на реализацию государственного строительства.

Ключевые слова: государство, государственное строительство, государственные структуры, элитные группы, построение нации, политические сообщества, экзогенно-эндогенное государственное строительство.

THE CULTURE OF STATE-BUILDING AS A GUARANTEE OF NATURAL MODERNIZATION OF A STATE

МКХИТАР ГАСПАРЯН, АШОТ ЗАЛИНЯН

Public Administration Academy of the Republic of Armenia

The paper presents the importance of state-building in the context of the development and modernization of each state, the factors making a positive and negative impact during the implementation of state-building.

Keywords: state, state-building, state structures, elite groups, nation-building, political communities, exogenous-endogenous state-building.

Ներկայացվել է խմբագրություն 09. 08. 2021
Երաշխավորվել է տպագրության 07.10.2021